ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/66

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.05.2018թ. թիվ 03/26-3/9635-18 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00112776/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարարության 29.05.2018թ. թիվ ԴՎԱ/1888 գրության հիման վրա, 30.05.2018թ. նախաձեռնել է «Էլմարկետ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 29.05.2018թ. թիվ ԴՎԱ/1888 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն՝ «Էլմարկետ» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 914,692 ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Էլմարկետ» ՍՊԸ-ի հայտը»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«Էլմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլմարկետ» ՍՊԸ-ն 13.06.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի 21.05.2018թ. որոշմամբ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 914,692 ՀՀ դրամի չափով, որը ակնհայտ անհիմն և բովադակազուրկ է՝ ներքոգրյալ պատճառաբանությամբ:

Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

1. ՀՀ Պաշտպանության նախարարության /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/:

2. «Էլմարկետ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ մասնակցել է Ընթացակարգին:

3. ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված գործառնության համաձայն՝ Ընկերության կողմից 09.04.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը որպես եկամտային հարկ փոխանցվել է 1,039,774,00 ՀՀ դրամ:

4. «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից 16.05.2018թ. թիվ 4 արձանագրությամբ /այսուհետ՝ Արձանագրություն/ պատճառաբանվել է, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն՝ ներկայացված պայմանագրում բացակայում է սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված տարբերակը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 17.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել շտկել անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից համարվել են հրավերի պահանջների համապատասխանող:

5. «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն բարեխղճորեն կատարել է բոլոր վճարումները, սակայն վճարված գումարներից առաջին հերթին մարվել են 2018թ.-ի ապրիլին կատարված ԵՏՄ

ներմուծումների հետևանքով առաջացած հարկերը, չնայած նրան, որ դրանց վճարման ժամկետը 2018թ. մայիսի 20-ն է, մինչդեռ մարտ ամսվա եկամտային հարկի գումարը, որի վճարման ժամկետը ապրիլի 20-ն է՝ դարձել է ժամկետանց:

6. Հարկային տեսչության կողմից տեղեկատվություն է տրամադրվում ոչ թե ժամկետանց հարկային պարտավորությունների, այլ տվյալ օրվա դրությամբ կազմակերպության հարկային պարտավորությունների վերաբերյալ, որոնք կդառնան ժամկետանց՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության՝ պարտավորությունն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 20-ից հետո:

7. Հարկային մարմնի աշխատակիցների կողմից պարզաբանվել է, որ հարկային ծրագիրը չի տարանջատում ժամկետանց հարկային պարտավորությունները և տրամադրում է տվյալ օրվա դրությամբ առկա հարկային պարտավորությունների մասին տեղեկատվություն, որը հակասում է ՀՀ գնումների մասին օրենքի 6.2 կետին, ինչը նշանակում է, որ հարկային մարմնի կողմից տրամադրվել է թյուր տեղեկատվություն:

8. Ընկերության կողմից վճարված գումարներից մարվում են այն պարտավորությունները, որոնք առաջանում են հաջորդ հաշվետու ժամանակահատվածում /օր.ԵՏՄ ներմուծումների ԱԱՀ/, իսկ այն պարտավորությունները, որոնք առաջանում են կամ առաջացել են տվյալ ժամանակահատվածում՝ դառնում են ժամկետանց:

9. Պատվիրատուի կողմից Ընկերությանը, որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ հնարավորություն՝ ժամանակ չի տրվել:

Առարկության իրավական հիմքերը և հիմնավորումները.

Վերը նշված փաստերի համադրության ուժով, որպես հիմնավորումներ, մեր կողմից առարկայացվում են ներքոգրյալ իրավափաստական հանգամանքները.

Այսպես, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշման 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած

հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Նույն որոշման 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Տվյալ դեպքում հարկային տեսչությունը տեղեկատվություն է տրամադրել ոչ թե ժամկետանց հարկային պարտավորությունների, այլ տվյալ օրվա դրությամբ կազմակերպության հարկային պարտավորությունների վերաբերյալ, որոնք կդառնային ժամկետանց՝ համաձայն ՀՀ հարկային օրենսդրության պարտավորությունն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 20-ից հետո:

Մեր բազմաթիվ ահազանգերին հարկային մարմնի աշխատակիցները պարզաբանում են, որ հարկային ծրագիրը չի տարանջատում ժամկետանց հարկային պարտավորությունները և տրամադրում է այդ օրվա դրությամբ առկա հարկային պարտավորությունների մասին տեղեկատվություն, որը հակասում է ՀՀ գնումների մասին օրենքի 6.2 կետին և կազմակերպությունը զրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից, հարկային մարմնի կողմից տրամադրված թյուր տեղեկատվության պատճառով:

Փաստորեն, վճարված գումարներից մարվել են այն պարտավորությունները, որոնք առաջանում են հաջորդ հաշվետու ժամանակահատվածում /ԵՏՄ ներմուծումների ԱԱՀ/, իսկ այն պարտավորությունները, որոնք առաջանում են կամ առաջացել են տվյալ ժամանակահատվածում, համարվել են ժամկետանց:

Ստեղծված պայմաններում Ընկերությունը չունի ժամկետանց պարտավորություն, ինչը նշանակում է, որ վերջինս չի կարող զրկվել մրցույթից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526 որոշման 48-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

Տվյալ դեպքում հարկային տեսչության կողմից ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ չէ, քանի որ վճարված գումարներից առաջին հերթին մարվել է կանխավճար համարվող գումարը՝ ԵՏՄ ներմուծման ԱԱՀ, իսկ փաստացի առաջացած պարտքը՝ եկամտային հարկը, դարձել է չվճարված, այսինքն պարտք, հետևաբար՝ կա պարտավորություն, սակայն ոչ ժամկետանց:

Ավելին, 16.05.2018թ. թիվ 4 արձանագրությամբ պատճառաբանվել է, որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն և 17.05.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել է շտկել անհամապատասխանությունը, ինչն էլ արվել է մեր կողմից, որը գնահատող հանձնաժողովի կողմից համարվել է հրավերի պահանջների համապատասխանող:

Մինչդեռ տվյալ իրավիճակում Ընկերությանը որևէ հնարավորություն չի տվել սույն գործով խնդրո առարկայի վերաբերյալ որևէ դիրքորոշում կամ շտկում ներկայացնելու համար, ինչը կարծում ենք իրավաչափ մոտեցում չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդը անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Խորհրդի անդամները բողոքներն ուսումնասիրում են պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Խորհրդի անդամները սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր են բացառապես ղեկավարվել օրենքով և կիրառել այն:

Վերը նշված իրավափաստական հանգամանքների ուժով, խնդրում ենք «Էլմարկետ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակից ների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Սամվել Սիմոնյանը և Ելենա Ղալայանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/66 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2018թ. թիվ 03/26-3/9635-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարարության 29.05.2018թ. թիվ ԴՎԱ/1888 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 25.04.2018թ. նիստի թիվ 3 և 16.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի 16.06.2018թ. Բողոքներ քննող անձին հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարարության կարիքների համար հեռուստասարքերի գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 25.04.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 28,999,998 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին, իսկ 4.2 կետով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերվող պարբերությամբ նախատեսված պահանջի առկայության վերաբերյալ:

Կոմիտեի կողմից 11.05.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 23.04.2018թ., դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 914,692 ՀՀ դրամի չափով հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 16.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է վերը նշված պարտավորության առկայությունը և որոշել է մերժել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

• 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

•7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են

իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերությունը կատարել է իր հարկային պարտավորությունների վճարումները, սակայն վճարված գումարներից առաջին հերթին մարվել է կանխավճար համարվող գումարը՝ ԵՏՄ ներմուծման ԱԱՀ-ի գումարը, 2018թ. ապրիլին կատարված ԵՏՄ ներմուծումների հետևանքով առաջացած հարկերը, թեև դրանց վճարման ժամկետը 20.05.2018թ. էր, մինչդեռ մարտ ամսվա եկամտային հարկի գումարը, որի հաշվետվության ներկայացման օրը 16.04.2018թ. էր, իսկ վճարման ժամկետը՝ 20.04.2018թ.-ը, արտացոլվել է որպես ժամկետանց հարկային պարտավորություն: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ իր բազմաթիվ դիմումներին և բողոքներին ի պատասխան հարկային մարմնի աշխատակիցների կողմից պարզաբանվել է, որ հարկային մարմնի կողմից ներդրված նոր համակարգի աշխատանքով պայմանավորված՝ հարկային ծրագիրը չի տարանջատում ժամկետանց հարկային պարտավորությունները և տրամադրում է տվյալ օրվա դրությամբ առկա հարկային պարտավորությունների մասին տեղեկատվություն, այսինքն ստեղծված իրավիճակը տեխնիկական (ծրագրային) խնդրի արդյունք է:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 09.04.2018թ. 1.039.774 ՀՀ դրամ գումարի չափով ԻնեկոՕնլայն ինտերնետային բանկային ծառայությունների համակարգով կատարված վճարման հանձնարարականը, որում որպես գումարի վճարման նպատակ նշված է եկամտային հարկի վճարում:

- Քաղվածք 23.04.2018թ. դրությամբ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտից, համաձայն որի՝ ներմուծման մասով ԱԱՀ-ի գծով պարտավորության չափը կազմել է 928.928,55 ՀՀ դրամ, եկամտային հարկի մասով՝ 878.412,99 ՀՀ դրամ, և սոցիալական վճարի մասով՝ 36.123,09 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 78-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ, բացառությամբ նույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերով սահմանված դեպքերի:

Օրենսգրքի 325-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 23.04.2018թ. դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն՝ 914.692 ՀՀ դրամի չափով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության կողմից 09.04.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանը որպես եկամտային հարկ փոխանցվել է 1.039.774 ՀՀ դրամ՝ սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վճարված գումարներից առաջին հերթին գանձվել են ըստ հաշվետվությունների ներկայացման հաջորդականության՝ 2018թ. ապրիլին կատարված ԵՏՄ ներմուծումների հետևանքով առաջացած հարկերը, ինչի արդյունքում մարտ ամսվա եկամտային հարկի գումարը, որի վճարման ժամկետը՝ 20.04.2018թ. էր, արտացոլվել է որպես ժամկետանց հարկային պարտավորություն:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության եկամտային հարկի գծով ժամկետանց հարկային պարտավությունն առաջացել է ոչ

վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով, այլ պայմանավորված է ՀՀ հարկային մարմնի կողմից 2018թ. սկզբից ներդրված միասնական հարկային հաշվի նոր համակարգի աշխատանքի տեխնիկական առանձնահատկություններով: Ուստի, նշված հանգամանքներում ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը չի կարող դիտարկվել որպես մասնակցի կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.05.2018թ. թիվ 03/26-3/9635-18 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ